Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ԼԻԼԻԹ ԴԵՐՁՅԱՆ» (ՀԱՅՔ ՊԼԱՍՏ) ԱՁ– ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին
Գտնվելու վայր՝ Վանաձոր
Հիմնական ապրանքատեսակներ՝ մետաղական կոնստրուկցիաներ, դռներ և պատուհաններ
Աշխատակիցների թվաքանակ՝ 17
Հիմնական շուկան՝ Հայաստան
Հիմնադրման տարեթիվ՝ 2016

«Լիլիթ Դերձյանը», որը հայտնի է նաև որպես **«Հայք պլաստ»**, հիմնադրվել է 2016 թվականին՝ որպես տեղական ընկերություն, որն աշխատում է Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերում: Ժամանակի ընթացքում ընկերությունը ցանկացավ ընդլայնել իր գործունեությունը հանրապետության մնացած շրջաններում՝ մասնակցելով պետական և բաց մրցույթներին: Ձեռնարկությունը մասնագիտացած է մետաղական և պլաստիկ դռների և պատուհանների արտադրության մեջ և հատուկ ուշադրություն է դարձնում այն հումքին, որն օգտագործում է արտադրական գործընթացում՝ փնտրելով շրջակա միջավայրի վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող հումք: Էներգախնայողության բարելավման շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» EU4Environment (2019-2024). շրջանակում :

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1
2 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացված ծախսերի կրճատման վրա)

2
Տարեկան 4000 եվրո արժողությամբ տնտեսական խնայողություններ

3
Կարճ հետգնման ժամկետ (մեկ տարուց պակաս)

4
CO_2 տարեկան արտանետումն երի կրճատում

Գործողությունն իրականացվել է

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ երկուսին, որոնք միջինից բարձր ծախսատարության առաջարկություններ են:

ՌԱՄԱ տարբերակ 1: Տնտեսվարման լավ պրակտիկաների ներդրում: Սա զգալիորեն կնվազեցնի ընկերության տարեկան ծախսերը էներգիայի և վարձակալության վճարումների վրա, քանի որ վարձակալված տարածքը երեք անգամ ավելի մեծ է, քան արտադրության համար օգտագործվող հատվածը: Իր ներկայիս չափերով ընկերությունը դեռևս չի կարող ձմռանը ջեռուցել ամբողջ տարածքը, ինչի պատճառով ցուրտ սեզոնին նրա աշխատանքը կրճատվում է:

ՌԱՄԱ տարբերակ 2: Գնել լուսադիոդային (LED) լամպեր և ուղղիչ հոսանքի լարեր: Այս միջոցառումը զգալիորեն կնվազեցնի էներգիայի սպառումը և կկանխի հնարավոր վթարները և լարման տատանումները, որոնք կարող են վնասել սարքավորումները:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Տնտեսվարության լավ պրակտիկաների ներդրում:
ՏԱՐԲԵՐԱԿ 2	Գնել լուսադիոդային (LED) լամպեր և ուղղիչ հոսանքի լարեր:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Տարբերակ 1:	/	3,000	/
Տարբերակ 2:	500	1,000	/

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Նյութեր (%/տարի)	Էլ.էներգիա (Կվտժ/տարի)
Տարբերակ 1:	25	5
Տարբերակ 2:	1-2*	5

** 1-ից 2% ապակի, մետաղ և պլաստիկ:*

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ընդհանուր CO_2(տ/տարի)
Ընդհանուր:	0.0002

Ընկերության պատկերացում

Ղեկավարվելով ՌԱՄԱ մեթոդաբանությամբ՝ ընկերությունը կարող է զգալիորեն նվազեցնել ծախսերը և խնայել էներգիան: Լավ տնտեսվարության կանոնների իրականացումը (ներառյալ ավելի փոքր արտադրական տարածքների վարձակալությունը) կարող է տարեկան խնայել մինչև 3000 եվրո: Ներկայումս ընկերությունը արտադրական տարածքը վարձակալելու համար տարեկան վճարում է 6200-10000 եվրո, ինչը ընկերության հնարավորությունների համար մեծ գումար է: ՌԱՄԱ միջոցառումները գնահատում են, որ օգտագործվում է վարձակալված ընդհանուր տարածքի միայն 1/3-ը, ինչը նշանակում է, որ ընկերությունը կարող է խնայել վարձակալության ծախսերը՝ վերանայելով իրեն անհրաժեշտ օբյեկտները և վերակառուցելով իր արտադրական գործընթացները:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«Լիլիթ Դերձյան»-ը** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային Բնապահպանական Կենտրոն Կովկաս
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.**7,** շենք **N 2, 0010,** Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-115-75-148